ՀՀ ԳԱԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԿՄԿ ուսումնական մասի 2014-2015 ուստարվա գործունեության

Երևան – 2015 թ.

Ուսումնական մասի հիմնական գործառույթներն են՝

- Մագիստրատուրայում ուսումնական գործընթացի պլանավորում, կազմակերպում և վերահսկում,
- կրթության ներքին որակի ապահովմանն առնչվող գործառույթների համակարգում և վերահսկում,
- ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովում, այդ ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպում ու վերահսկում (նաև հակակոռուպցիոն ծրագրի շրջանակում),
- ուսումնական գործընթացին մասնակցող ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի համակարգում,
- մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում և կատարման վերահսկում,
- ամբիոնային ուսումնական բեռնվածությունների ստուգում և կատարման վերահսկում,
- մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման դասատախտակների ստուգում և ուսումնական գործընթացը լսարանային ֆոնդով ապահովում,
- ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների օպտիմալացում,
- առկա և հեռակա ուսուցման դասերի կայացման վերահսկում, դասամատյանների ստուգում,
- մագիստրոսական ծրագրերի ղեկավարների և համակարգողների աշխատանքների կոորդինացում,
- ամբիոնների վարիչներին և ստորաբաժանումների աշխատակիցներին մեթոդական աջակցության ցուցաբերում,
- ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում,
- ամփոփիչ ավարտական քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,
- գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում,
- ուսանողների շարժունության հետ կապված գործընթացի կազմակերպում, հրամանագրում և վերահսկում,
- ԳԿՄԿ ամբիոնների ընթացիկ և տարեկան հաշվետվությունների ամփոփում,
- ուսանողների տվյալների հենքի ստեղծում և պահպանում,
- ուսումնական պլանների, դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ստուգարքային և քննական տեղեկագրերի ու դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգով գործընթացի կազմակերպում և վերահսկում,
- գնահատման առանցքային ցուցանիշների ամփոփում:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական մասն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

❖ Ինչպես նախորդ, այս ուստարում ևս կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է ԳԿՄԿ կայքէջում՝ ուսանողների և դասախոսների իրազեկության մակարդակի բարձրացման և մագիստրոսական կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով:

❖ Հաշվետու տարում ևս վերանայվել է առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ցանկը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների նախասիրությունները:

❖ Աշնանային և գարնանային կիսամյակներում ամփոփվել են ուսումն ընդհատած ուսանողների տվյալները:

❖ Աջակցել եմ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ԳԿՄԿ մասնագիտությունների կրթական ծրագրերի (մագիստրատուրա) նոր ցանկի ձևավորման գործընթացին:

❖ Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով, ինչպես նախորդ, այս ուստարում ևս բոլոր բաժիններն իրենց գործունեությունը իրականացրել են՝ հետևելով ՀՀ Կառավարության, ԿԳ նախարարության և ԳԿՄԿ կանոնակարգերին ու պահանջներին:

❖ Ուսումնական գործընթացները բարելավելու նպատակով ԳԿՄԿ ուսումնական մասի աշխատակիցները կազմակերպել են ստուգումներ այդ գործընթացներին առնչվող գործառույթների շրջանակներում:

❖ Քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածներում ուսանողների և դասախոսների շրջանում շարունակվել են բացատրական-մեկնաբանման աշխատանքները քննությունների անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ:

❖ Ուսմասի կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

❖ Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Ձեռնարկվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

❖ 2015 թ. Պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 470 դիպլոմ, որոնցից 251- ը՝ առկա ուսուցման համակարգում/14-ը՝ գերազանցության/, 219-ը՝ հեռակա /8-ը՝ գերազանցության/:

❖ Նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար Կենտրոնն ունի պայմանագրեր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ինչպիսիք են՝ ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրական դատարանը, ՀՀ դատական դեպարտամենտը, նախարարությունները, դպրոցները, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչությունները և այլն): Պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել

գործատուների պահանջները, ինչը հետագայում աշխատանքի տեղավորման գործում կնպաստի շրջանավարտների մրցունակ լինելուն, որի շնորհիվ որոշ շրջանավարտներ աշխատանքի են անցել ՀՀ Ազգային ժողովում, Պաշտպանության նախարարությունում, դպրոցներում, դեղագործական կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում:

❖ Պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև անցած տարիների ընթացքում ամբիոնների կողմից ներկայացված առաջարկությունները: Նոր կրթական ծրագրերին համապատասխան ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը:

ԳԿՄԿ ուսումնական մասի պետ՝ **Ե. Զարգարյան**